Արձանագրություն N 3
ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար գնանշման հարցմամբ տպիչների ձեռքբերման «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2017/17» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «30» «օգոստոս» 2017թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Ռ. Վարդանյան

Հանձնաժողովի անդամներ Ա.Մուրադյան

Ս.Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար Լ. Սարգսյան

1. Հայաստանի Հանրապետության ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնելու մասին

(Ռ. Վարդանյան)

Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2017/17» ծածկագրով գնման ընթացակարգի ամփոփման նիստը գնահատող հանձնաժողովի անդամների բացակայության հիմնավորմամբ նշանակվել է 30.08.2017թ.:

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով հարցում էր ներկայացվել ՀՀ ԿԱ ՊԵԿ, վերջինիս եզրակացությունը կցվում է:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Ռ. Վարդանյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ որոշվել էր առաջարկել մասնակիցներին ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

1. «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2017/17» ծածկագրով գնման ընթացակարգի ամփոփման մասին

(Ռ. Վարդանյան)

«Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով հայտարարել հաղթող մասնակից և կնքել պայմանագիր՝ 378 000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2017/17» ծածկագրով գնման ընթացակարգի անգործության ժամկետի սահմանման մասին

(Ռ. Վարդանյան)

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2017/17» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ է սահմանվում (օգոստոսի 31-ից սեպտեմբերի 4-ը ներառյալ):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ռ. Վարդանյան

Անդամներ՝ ---------- Ա.Մուրադյան

---------- Ս.Հակոբյան

Քարտուղար՝ ---------- Լ. Սարգսյան